## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, (060) 46-47-37 kotayq.zoravan@mta.gov.am, zoravan@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 48

## ԶՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 14 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1.Հաստատել համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 29-ի N 14 արտահերթ նիստի օրակարգը.

1)Հայաստանի Հանրապետության Զորավան համայնքի սեփականություն համարվող հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին:

2)Զորավան համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքների քննարկման մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
4. ՂԱՎԱԼԲԱԲՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
5. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, (060) 46-47-37 kotayq.zoravan@mta.gov.am, zoravan@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 49-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Զորավան համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն աղյուսակի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
4. ՂԱՎԱԼԲԱԲՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
5. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Առդիր 1

## Գյուղատնտեսական նշանակության հողերի աճուրդ-վաճառք

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական նշանակության հող | գ. Զորավան | 07-031-0221-0047 | 1.87353 | գյուղատնտեսական | III կարգ արոտ | Արոտավայր | 592 000 | չկան |
| 1 | Գյուղատնտեսական նշանակության հող | գ. Զորավան | 07-031-0219-0024 | 2.95783 | գյուղատնտեսական | III կարգ անջրդի | Վարելահող | 1 360 600 | չկան |

Համայնքապետարանի աշխատակազմի

քարտուղար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, (060) 46-47-37 kotayq.zoravan@mta.gov.am, zoravan@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 50

## ԶՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կողմից կազմված 2016 թվականի օգոստոսի 26-ի N 14 արձանագրությունը, ինչպես նաև դրա վերաբերյալ համայնքի ղեկավարի ներկայացրած 2016 թվականի սեպտեմբերի 20-ի տեղեկատվությունը, Զորավան համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1.Ի գիտություն ընդունել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կողմից Զորավան համայնքում իրականացրած վարչական հսկողության արդյունքները, ինչպես նաև դրանց վերաբերյալ համայնքի ղեկավարի ներկայացրած տեղեկատվությունը (կցվում է):

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հետևողական լինել արձանագրված թերությունների վերացման ուղղությամբ տրված հանձնարարականների արագ և արդյունավետ կատարման նկատմամբ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
4. ՂԱՎԱԼԲԱԲՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
5. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ**